

ՎԱԽՃԱՆՎԵՑ
ՀՈԳԵՇՆՈՐՀ Տ. ՋԱՎԵՆ ԱՔԵՂԱ ՀԱԿՈԲՅԱՆԸ

Օգոստոսի 8-ին Եղեգնաձորից Նորավանք վերադարձի ճանապարհին ավտովթարից վախճանվեց Նորավանքի հոգևոր տեսուչ Տ. Ջավեն աբեղա Հակոբյանը:

Տ. Ջավեն աբեղա Հակոբյանը (ավազանի անունը՝ Արման) ծնվել է 1977 թ. մայիսի 12-ին Էջմիածին քաղաքում:

1984-1992 թթ. սովորել է Էջմիածնի Հ. Հովհաննիսյանի անվան թիվ 3 միջնակարգ դպրոցում:

1989 թվականից ծառայել է Էջմիածնի Ս. Աստվածածին եկեղեցում:

1992-1994 թթ. ուսանել է Երուսաղեմի Ժառանգավորաց վարժարանում:

1995 թ. ընդունվել է Գևորգյան Հոգևոր Ճեմարան և 2000 թ. ավարտել այն:

2000-2001թթ. մասնակցել է Ամերիկյան համալսարանում կազմակերպված մենեջմենտի դասընթացներին:

2001 թվականից սովորում էր ԵՊՀ-ի իրավաբանական ֆակուլտետում:

2000-2004 թթ. աշխատել է Ս. Էջմիածնի Կաթողիկոսարանում՝ որպես գործավար քարտուղար:

2002 թ. դեկտեմբերի 24-ին՝ Ս. Ստեփաննոս Նախավկայի տոնին, ձեռամբ Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանի, ձեռնադրվել է սարկավագ:

2003 թ. ապրիլին պաշտպանել է ավարտաճառ՝ «Տ. Գյուտ ավագ քահանա Աղանյանց. կյանքը, հոգևոր-հասարակական գործունեությունը, գիտագրական ժառանգությունը» թեմայով:

2004 թ. ապրիլից նշանակվել է աշխատանքի Մայր Աթոռի Ճարտարապետա-շինարարական բաժնում:

2004 թ. մայիսի 2-ին, ձեռամբ Տ. Աբրահամ եպս. Մկրտչյանի, ձեռնադրվել է կուսակրոն քահանա:

2005 թ. փետրվարի 1-ից Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի Հայրապետական տնօրինությամբ նշանակվել էր Նորավանքի հոգևոր տեսուչ:

Ծառայության մեջ հոգելույս Հայր Սուրբը դրսևորել է՝ իրեն որպես ծառայասեր, նվիրյալ և նախանձախնդիր հոգևորական:

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը և Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբանությունը խոր վշտով սգում են երիտասարդ, հավատավոր ու ազնիվ միաբանի վաղաժամ մահը:

Օգոստոսի 11-ին, հընթացս Ս. Պատարագի, կատարվեցին հանգուցյալ Հայր Սուրբի վերջին օծման և հուղարկավորության արարողությունները: Հայր Սուրբի մարմինը ամփոփվեց Մայր Աթոռի միաբանական գերեզմանատանը:

«Յիշատակն արդարոյն օրհնութեամբ եղիցի»:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ